

1852

h - 56

4997-5005

28

z-56


2010

1996/1995

84

1

\* 2001





անհօգ/ աշխատիս պարզ գույն կատառ ծառ զ՞ի  
 չե զժամի դա ունենալու պարագաները մի կ բան  
 առ և մասնաւ վայրի մա ու թիւս ո՞ք չ մըն  
 աց ոք աղջոր ու քայր աւ զանց զի ունի  
 մատուցման աւ առաջարկութիւն մա զանուցման հոգուն  
 առաւ զանուցման/ ո՞ք ու պահ առանի ի՞ւ ու  
 չաձառան/ : զանու առանց քայրունի ու միջնա  
 զանի զժիւս և զանու զանուն անձիւն առ ու  
 մաշքան մասնաւ միջնուն ու մաշքան մայստ  
 'օնան ելառդու միջնուն/ զանուն առ այսունիւնի մէջ  
 ու մամթիւն քմարուն/ զան ու մամթիւն այսունիւնի  
 : Հայոց ո՞ն մասնաւ վերա մի?

20  
թ. 91.

ՔԱՐԵՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՐ

ՏԵՐՈՒՄԵԿԵՐ ՍՈՒՐԲ ՕՐԸ

ԱԽՏՈՒԱԺԱՅԻՆ ՊԱՇՏԱՄԱՆՑ

ՆԵՐԿԱՅ ԳՏՆՈՒԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՐՈՒԹԵԱՆՑ

ՎՐԱՅ

---

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ա ՏՊԱՐԱՆԻ Ա Պ Զ Ե Ր Ե Լ Կ Դ

78137-42



1216-87

1216-87

ՔԱՅԵՐԻՈՒՄ ՊԵՏԱԿԱՆԵՐ

ՏԵՐՈՒԵԿԱՆ ՍՈՒՐԲ ՕՐԸ

ԱՍՏՈՒԱՃԱՅԻՆ ՊՅԱՇՏԱՄԱՆՑ

ՆԵՐԿԱՅ ԳՏԵԱԿԵԼՈՒ ՊԱՐՏՅԱՌՈՒԹԵԱՆԸ ՎՐԵՅ

Ը նթերցող՝ կը կանխի՞ս կամ կ'երթան  
Տէրունական օթերը Աստուծոյ միաբանու-  
թեամբ պաշտօն մատուցանելու : Եմէն Տէրու-  
նական օր կ'երթան անպատճառ՝ խղճի մտօք՝ և  
անհրաժեշտ պարտաւորութիւնդ սեպելով զա՞ն :  
Ի՞նչ կը պատասխանես աս խնդիրներուն : Թէ  
որ ըսես, Երբեմն կ'երթամ և երբեմն ալ զանց  
կ'ընեմ. բացօդեայ օրերը կ'երթամ, կամ երբ-  
որ կամք ունենամ երթալու, կամ երբոր տունս  
մարդ չգայ տեսութեան համար և զիս արգիլէ,  
և կամ թէ որ միտքէս չելլէ, թէ որ ասոնց  
պէս արգելքներ չունենամ, — կ'երթամ : Ու-  
րեմն ակա՞նջ դիր սրտի մտօք աս հետեւեալ պատ-  
ճառներուն, որոնցմով պիտի համոզուիս թէ՝  
պարտաւոր ես ամէն Տէրունական օր անպատ-  
ճառ երթալ Աստուծոյ պաշտօն մատուցանե-  
լու իր ժողովուրդին հետ, թէ որ Աստուածա-  
յին նախախնամութեամբ չարգիլուիս :

1. Աստուած՝ որքու Արարիչդ՝ Պահպանիչդ՝  
և Փրկիչդ է, արժանի է քեզմէ երկրպագու-  
թիւն ընդունելու :

2. Աստուած կը հրամայէ քեզի . “Շնծայ ա-  
ռեք և Ենոր սրանկերուն մէջը մտէք . սուրբ  
հանդէսով՝ Տէրոջը երկրպագութիւն ըրէք” :  
Առաջ . զար . 8, 9 : “Սաւ կը պատուիրէ քեզի,  
որ մէկ տեղ ժողվուիլը չթողուք : Եշտ . ժ . 25 :  
Եւ “հանգստութեան օրը միտքդ բեր՝ անիկայ  
սուրբ պահելու համար” (Եշտ . ի . 8) ըսելովը՝  
անտարակոյս ըսել ուղեց, որ հանգստութեան  
օրուան մասնաւոր և յատուկ պաշտօնն ըլլա-  
լու է հրապարակական պաշտամունքը :

3. Աստուած ան տեղը քեզի կ'սպասէ, որ  
գաս և իր օրնութիւններն ընդունիս . և ի՞նչ չ-  
պէս կը համարձակիս հեռու կենալ իրմէն, և  
ան օրնութիւնները կորսնցընել :

4. Աստուած հին ատենները մեծապէս պատ-  
ուեց հրապարակական պաշտամունքը՝ իրրե-  
գլխաւոր և առաջին միջոց Քրիստոնէութիւնը  
աս աշխարհիս մէջ կենդանի և անշէջ պահելու  
և մշնջենաւորելու համար . իսկ թէ որ դուն  
զանց ընես աս պաշտօնը կատարելը, յայտնի  
կը ցուցընես, թէ դուն շատ հոգ չունիս Քրիս-  
տոնէութեան վրայօք . և կ'անարդիս Աստուծոյ  
պատուած բանը՝ որով այսչափ բարիք եղաւ,  
կ'ըլլայ, և պիտի ըլլայ աշխարհիս :

5. Թէ որ հրապարակական պաշտամունքը

խափանուելը և վերնար աշխարհէս , Քրիստոնէութիւնը շատոնց մարեր և բնաջինջ եղեր էր . ուստի ով որ զանց կ'ընէ աս պաշտօնը , իր կրցածին չափ ձեռնտուութիւն կ'ընէ Քրիստոնէութիւնը իր ըրածին օրինակովը աս աշխարհիս մէջ բնաջինջ ընելու :

6 . Անկարելի է , որ Քրիստոսի եկեղեցի մը անխախտ և կենդանի մնայ հոգեոր բաներու մէջ՝ առանց մէկ տեղ ժողվուելով Աստուծոյ երկրպագութիւն մատուցանելու . և ուստի թէ որ դուն հեռու կենաս ասանկ ժողովքներէ , քու կողմէդ օգնութիւն ըրած կ'ըլլաս ադ եկեղեցին կործանելու և հիմնայատակ ընելու :

7 . “Աստուծած հաճեցաւ քարոզութեան յիմարութիւնովը հաւատացեալները ապրեցընելու” . առ Առքնել . առ . 21 . և մեր Փրկչին՝ “Որ կ'ուզէ թէ ամէն մարդիկ փրկուին , ու Ճշմարտութիւնը ճանչնալու գան” , առ Տիմ . թ . 4 , մարդասէր կամքն է , որ շատերը գան խօսքը լսելու : Ուսաի թէ որ դուն հեռու կենաս ասանկ ժողովքներէ՝ Աստուծոյ դէմ կը գործես , քու հոգւոյդ դէմ կը գործես . և նաև քու օրինակովդ ուրիշներուն կ'ըսես , “ Աստուծոյ տունը մի երթաք , որ ինքը սահմանեց իրու իր յատուկ տեղը մեղաւորները արթնցընելու և դարձի բերելու համար” : Ծաէ որ քարոզիչը պարտաւոր է քարոզելու , դուն ալ պարտաւոր ես մտիկ ընելու :

8 · ԽորհՀէ անգամ մը Կստուծոյ քաղցրութիւնը՝ որ կը հաճի քեզի պէս մեղաւորի մը երկրպագութիւնը ընդունիլ, և մի ասանկ ապերախտ փոխարէն մը ըներ աս վսեմ պարտաւորութիւնը մերժելովդ :

9 · Ծաէ որ ընտանիքի տէր ես և գլուխ, խորհՀէ անգամ մը թէ ինչ մեծ օրնութիւն մը կրնայ ըլլալ քու զաւակներուդ, թէ որ անոնք մանկութենէ վարժուին ամէն Տէրունական օր անխափան Կստուածային պաշտամունքի ներկայ գտնուելու քայց անկարելի է անոնց աս վարժութիւնը ունենալ՝ մինչեւ որ քեզ օրինակ չունենան առջենին : Ուստի աս պաշտօնը զանց ընելովդ՝ չէ թէ մինակ քու անձիդ կը վնասես, այլ և քու զաւակներուդ ։ ինչու որ անոնց՝ թէ աս և թէ հանգերձեալ աշխարհին մէջ վայելելիք բարօրութիւնը, քու օրինակէդ կախեալ կը մնայ :

10 · Ծաէ որ երիտասարդ մըն ես, կամ երիտասարդուհի, պարտաւոր ես Կստուծոյ և քու հոգւոյդ և քու հասակակից բարեկամներուդ և Ճանչւորներուդ՝ որ կանոնաւոր կերպով Կստուծոյ Տունը երթաս :

11 · Դաւիթ կ'ըսէ ։ “Կ'ուրախանայի երբորինծի կ'ըսէին, Տէրոջը տունը երթանք”։ Առաջ Ճիր ։ 1 : Ես էր ’ի սկզբանէ անտի մինչեւ այսօր Կստուծոյ Ճշմարիտ ժողովուրդներուն զգացումը, և մարդարէներն ու առաքեալները իրենց օրինակը թողուցին մեզի :

12. Հրապարակական պաշտամունք եղած տեղը անանկ գիտութիւն ձեռք կը բերես , որ Ակեանք կու տայ հոգւոյն”:

13. Են տեղը Աստուծոյ առջեւ կայնելովդ՝ Անոր յատուկ օրնութիւնը կը վայելես , և առատապէս կ'ընդունիս Առւրբ Հոգին , որով կարող կ'ըլլաս “աճիլ Տէր Յիսուս Քրիստոսի նորհքով ու գիտութիւնով”:

14. Ամէն Տէրունական օր հրապարակական պաշտօնի կանոնաւորապէս երթալու ունակութիւնը՝ կը ծառայէ Աստուծոյ ժողովուրդը մէկզմէկու հետ միացընելու , և մարդոց վրայ աւ մաքրութիւն վայելչութիւն և բարեկարդութիւն կը բերէ . հասարակութեան մէջ մաքուր բարոյականութիւն կը խօթէ , և ուղիղ զգացումն ու բարւոք խօսակցութիւն կը տարածէ :

15. Քարոզութիւնը՝ աղօթքը՝ և սրբազն երգը կը նուածեն և կը սանձեն մարդոց գաղանական կիրքերը , մարդկային փափուկ զգացում և կարեկցութիւն կ'ստեղծեն սրտին մէջ , և այսպէս չէ թէ մինակ Քրիստոնեայ կ'ընեն զմարդիկ՝ այլ և քաղաքավար և աղնուական :

16. Թէ որ ամէն Տէրունական օր կանոնաւորապէս Աստուծոյ Տունը երթաս , շատ հաւանական է որ՝ քու խիղճդ աւելի փափուկ պիտի ըլլայ . և դուն ազատ պիտի մնաս բազմաթիւ փորձութիւններէ՝ որոնք են շաբաթը պղծել աշխարհային գործ տեսնելով , անվայե-

Λπεξ ηθηρε **καρητωληψ**, οιναγήν **խորհուրդներով**, ηαտարկ **մտածութիւններով**, և և :

17. **Ա**ս οιնակութիւնը **հաստատուն** **կը պահէ** **Ա**յ **Աստուծոյ** **վախը** **մարդուս** **հոգւոյն** **մէջ**, **և** **ինչպէս** **որ** **Առւրբ** **Գիրքը** **կը սորվեցընէ** **մեզի** **աս** **Ա**ստուծոյ **վախը** **իմաստութեան** **սկիզբնէ** :

**Աստակ** . **առ** . **7** :

18. **Ա**ստուծոյ **Տունէն** **հեռու** **կենալովգ** **թուլութիւն** **կը քերես** **քարողիչին** **սրտին** **և** **հաւատքին** . **վասն** **զի** **քեզի** **քարողելուն** **տեղը** **քուդատարկ** **նստարանիդ** **պիտի** **քարողէ** . **նոյնպէս** **ալ** **կը թուլցընես** **քու ժողովքի** **գացող** **եղայրներդ** :

19. **Հ**րապարակական **պաշտամունքի** **համար** **Ա**ստուծոյ **ժողովրդին** **հետ** **մէկտեղ** **գալը** **Վըրիստոսի** **և** **Անոր** **աւետարանին** **հաւատալուն** **արտաքին** **խոստովանութիւնն** **ու** **դաւանանքնէ** : **Ուստի** **որ** **և** **է** **ժամանակ** **որ** **հեռու** **կենաս** **ասանկ** **ժողովքներէ**, **զանց** **ըրած** **կ'ըլլաս** **աշխարհիս** **առջելը** **զՎրիստոս** **խոստովանելը**, **որն** **որ** **քու** **ուխտեալ** **պարտքդէ** :

20. **Թաէ** **որ** **կոնակդ** **Ա**ստուծոյ **Տանը** **դարձընես**, **ամենայն** **հաւանականութեամբ** **շատ** **չարիք** **և** **մեղք** **պիտի** **դործես** **քու** **հոգւոյդ** **գէմ** :

**առ** . **Հ**աւանականաբար **պիտի** **զանց** **ընես** **տանդմէջ** **Ա**ստուածաշունչ **կարդալն** **ու** **աղօթք** **ընելը** :

**թ** . **Պիտի** **հեռու** **կենաս** **Ա**ստուծոյ **ժողովքրդին** **ընկերութենէն** :

դ . կամաց կամաց պիտի պաղիս , անհոգ ըլլաս , և մեռնիս հոգեորապէս :

Ե . Պիտի ցուցընես ինքզինքդ , թէ հեռու ևս Աստուծմէ՝ սրբութենէ և երկինքէն :

Ե . Ըուտով պիտի սկսիս կոտրել Աստուծոյ օրէնքները և Աստուծոյ շաբաթը զանազան կերպերով , քու հեշտութիւններդ փնտուելով և աշխարհային գործքերուդ զբաղելով :

Հ . Եյսպէս Աստուծոյ օրը և Աստուծոյ Տունը զանց ընելով և Աստուծոյ Հոգին տրտմեցընելով՝ կամաց կամաց սիրտդ պիտի խստանայ մեղքի մէջ , և յայտնի անհաւատ պիտի ըլլաս Աստուծոյ Խօսքին , և Աստուծոյ շնորհքէն ու երկինքէն դուրս ձգուած թշուառ մէկը պիտի ըլլաս :

21 . Թէ որ զանց ընես Տէրունական օրերը Աստուծոյ Տունը երթալը , խորհէ անդամ մը՝ ի՞նչ չարիքներ պատճառ պիտի ըլլաս ուրիշներուն գլխուն քերելու :

Թ . Վու չար օրինակովդ քաջալերութիւն և սիրտ պիտի տաս կրօնքի վրայօք անհոգ եղողներուն , ամբարիշտներուն , Աստուծոյ օրէնքները կոտրողներուն , և Աստուծոյ անունը հայհոյողներուն :

Ի . Պատճառ պիտի ըլլաս աշխարհիս վրայ անկրօնութեան տարածուելուն , և բոլոր մարդոց անհաւատ ըլլալուն :

Դ . Վու չար օրինակովդ ձեռնտու պիտի ըլլամ

լաս հեթանոսացընելու քու ընտանիքդ և դրացիներդ և քու բնակած երկրիդ բնակիչները :

դ . Դուն զանց պիտի ընես , անարգես , և մէկդի ձգես ան Վրիստոնէական առանձնաշնորհութիւնները՝ առանց որոց հարիւրաւոր հաղարաւոր և միլիոնաւոր հոգիներ պիտի կորսուին . և ով գիտէ՝ ասոնցմէ քանի՞ն “ Դատաստանին օրը գէմդ պիտի ելլեն , և պիտի դատապարտեն քեզ ” :

22 . Յեշէ , որ եթէ զանց ընես երթալ անտեղը՝ ուր որ Աստուած երկրպագութիւն կ'ընդունի իր ժողովուրդին մէջ , Ընիկայ անշուշտդատաստանի պիտի քաշէ քեզ ատ բանին համար . և բոլոր յաւիտենականութեանդ մէջ պարապ տեղը պիտի ողբաս ու լաս , քանի որ յիշես Աստուծոյ շաբաթը և անոր սրբարանը զանց ընելդ ու անարգելդ :

Թաէ որ ըսես , թէ բոլորովին զանց չեմ ըներ Աստուծոյ հրապարակական պաշտամունքը՝ այլ երբեմն կ'երթամ կատարելու :

Կը պատասխանեմ . թէ որ վայելուչ և արժան է աւետարանին քարոզութիւնը լսել մէկ Տէրունական օր մը , ուրեմն վայելուչ և արժան ամէն անգամ :

Թաէ որ արժան է երկրպագութիւն մատուցանել Աստուծոյ մէկ Տէրունական օր մը , արժան է ամէն անգամ :

Ունի՞ս խելացի պատճառներ կանոնաւոր կեր-

պով Աստուծոյ Տունը չերթալու , հարցուր ինքզինքիդ . կը համարձակի՞ս ադ պատճառանքները Վրիստոսի առջին ընելու՝ Անոր դատաստանի ատեանին մէջ կայնած ժամանակդ :

Թէ որ Վրիստոսի եկեղեցւոյն մէկ անդամն են , Նարաւո՞ր բան է՝ որ ան եկեղեցւոյն կործանիլն ուղես . և թէ որ ասանկ կամք մը ունիս , — անոր դիւրին և կարճ ճամբան աս է . Տէրունական օրերը Աստուծոյ Տունը չես երթար , և թէ որ դուն իրաւունք ունիս և կրնաս չերթալ , ուրիշներն ալ նոյն իրաւունքն ունին չերթալու . և ի՞նչ կ'ըլլայ ան ատենը եկեղեցւոյն վիճակը , թէ որ անոր ամէն անդամներն ալ քեզի պէս ընելու ըլլան : Աստուծոյ Տանը դուները գոցելու է ան ատենը — և շուտովը ըլլալիքն ալ աս է : Խորհէ ասոր վրայ երբոր կրկին անգամ պատճառանք մը կը փնտոես Աստուծոյ Տունը չերթալու :

Միթէ չերթալուդ պատճառը՝ եկեղեցիին գէլ վիճակի մէջ ըլլալն է , եկեղեցւոյ անդամներուն մէջ Վրիստոնէական սէր և միաբանութիւն չըլլալն է , և կամ թէ դուն չես հաւնիր քարոզիչն : Բարի՝ բայց քու ժողովքներէ հեռու կենալովդ՝ ամենեին չեն պակսիր և չեն քիչնար աս չարիքները , այլ ընդհակառակն առանց արգելքի և սանձի մնալով՝ օրըստ օրէ առաւել քան զառաւել կը մեծնան . և թէ որ միւս անդամներն ալ քեզի պէս ըլլան՝

յայտնի կը տեսնուի , որ իրերը պատճես յառաջ պիտի երթան չարէն չարագոյնը , գէշէն ամենագելլը , մինչև որ եկեղեցին ինքնին կործանի գլխովին :

Ոմանք սովորութիւն ըրած են իրենց՝ Տէրունական օրը առաւօտեան պաշտօնին ներկայ գտնուիլ , և երեկոյեանը զանց ընել : Եթէ որ հարցընես անոնց ասանկ ընելնուն պատճառը , չեմ կարծեր թէ՝ տալու պատասխաննին լսելու արժանի խօսք մը ըլլայ • գուցէ Ճշմարիտ պատճառը սա եղած ըլլայ , որ երկու անդամ երթալու ձանձրութիւնը չեն ուզեր տանիլ . կամ աւելի պարզութեամբ ըսելով , ծուլութիւննին է մի միայն պատճառը : Քայց խորհիք որ ասանկ սովորութիւն մը ունակութիւն ընելով քեզի , քու օրինակիդ ազդեցութեամբն ու ներգործութեամբը պիտի խափանես երկրորդ պաշտօնը , վասն զի քու օրինակովդ ուրիշներուն կը սորվեցընես թէ՝ մէկ պաշտօնին երթալը հերիք է , կամ առաւօտեան կամ երեկոյեան :

Ոմանք կ'ըսեն թէ՝ մենք մեր տանը մէջ Ըստուածաշունչ և շատ ուրիշ կրօնական գիրքեր ունիմք , և մի և նոյն բանն է մեզի տանը մէջ նստիլն ու ինքնիրեննուս կարդալը՝ և ժողովքի երթալն ու հոն քարողիչէն լսելը : Ըսով ըսել կ'ուզես թէ՝ դու Ըստուծմէ աւելի խելացի ես , որ կը պատուիրէ քեզի՝ Դրեն եր-

կըրպագութիւն ընելու համար սմէկ տեղ ժողվուիլը զանց չընել":

Աստուած ադ պատուերը տուած և աւետարանին քարոզութիւնը սահմանած ժամանակը չէ՞ր գիտեր, որ ժողովուրդը Աստուածաշունչ կ'ունենան իրենց տանը մէջ. և թէ որ ուզեն, կրնան հոն կարդալ: Իրաւ, ընտանիքի մէջ Աստուածաշունչ կարդալը՝ անհրաժեշտ պարտաւորութիւն մընէ, որ կատարուելու է յարմար ժամանակին: Բայց ընտանիքի մէջ զանիկայ կարդալու ժամանակը՝ հրապարակական պաշտօն կատարելու համար սահմանուած ժամբը չէ՞ն:

Ոմանք կ'ըսեն թէ՝ բարեկամներնէն կամ ծանօթներնէն մէկը թէ որ հիւանդանայ, գործքերնին չներեր որ շարթու մէջ հիւանդտեսերթան անոր, և աս բանին համար է որ Տէրունական օրը կ'երթան: Եւ ան ալ ան ժամերուն՝ որ Աստուածային հրապարակական պաշտամունքը կատարելու համար սեպհականուած է: Իրաւ, թէ որ հարկը պահանջելու ըլլայ՝ իրաւունք է, և բնաւ մեղք մը չէ Տէրունական օր հիւանդտես երթալը՝ թէ որ չկրնանք ուրիշ օր երթալ:

Բայց խորհեք, ուոր օրը տասուերկու ժամէն. թէ որ քու հիւանդ բարեկամիդ տես երթալու ժամանակը որոշելը քու ձեռքդ է՝ ի՞նչու համար, և ի՞նչ իրաւունքով Աստուածային պաշ-

տօնի նուիրուած մէկ կամ երկու ժամը կը յա-  
փըշտակես՝ քանի որ անդին պատը ժամ ալ  
կայ, և կրնաս աս ժամերուն մէկուն մէջ այցե-  
լութիւնդ կատարել, և այսպէս Աստուծոյ Տու-  
նէն հեռու չմնալ:

Ոմանք զաւակներնին հետերնին չեն տանիր  
Աստուծոյ Տունը, սեպելով թէ անօդուա-  
բան մըն է տղաքները Աստուծոյ Տունը տանի-  
լը, քանի որ ոչ աղօթքը կրնան հասկրնալ ոչ  
ալ քարոզը : Եսիկայ սխալմունք է . ամէն  
Փրիստոնեայ ծնողք իր պարտաւորութիւնը  
ճանչնալու է՝ իր զաւակները կանոնաւորապէս  
Աստուծոյ Տունը տանիլը, մինչեւ անգամ թէ  
որ տղաքնին երեք կամ չորս տարեկան ըլ-  
լան :

Թողլ ըլլայ որ ասանկ պզտիկ տղաքները բան  
մը չհասկրնան ըսուած խօսքերէն . սակայն  
կրնան այսչափը սորվել թէ Բարձրեալ Աս-  
տուծոյ երկրագութիւն մատուցանելու կ'եր-  
թան . և այսպէս անոնց վրայ ունակութիւն մը  
կ'ըլլայ Աստուծոյ Տունը երթալը, որն որ շատ  
հարկաւոր է : “Կըթէ մանուկը իր ճամբան  
սկսած ատենը, որ իր ծերութեան ատենն ալ  
անկէ չխոտորի” : Եւակ . ի՞ր . 6 :

Հիմա ես քեզե ըսեմ, թէ ի՞նչ պարագանե-  
րու տակ կրնաս հեռու մնալ՝ անմեղադրելի  
կերպով, Աստուածային հրապարակական պաշ-  
տամունքէն . և

ա . Երբոր կարողութիւն չես ունենար հիւանդութեան պատճառով :

բ . Երբոր Վատուածային նախախնամութիւնը ինչ և է կերպով մը կ'արգիլէ քեզ :

գ . թէ որ չերթալուդ նպատակը անկեղծութեամբ սա է , որ քու անձամբ տունը կենալովդ՝ պատեհութիւն մը տաս ընկերիդ , կամ ընտանիքէդ մէկուն երթալու՝ երբոր ամէնքնիդ մէկ տեղ չէք կրնար երթալ . և աս ալ փոխն ՚ի փոխը ըլլալու է հարկաւ :

Դրդ , աս նիւթս կը վերջացընեմ աղաչելով ամէն անոնց՝ որոնք աս փոքր և համառօտ յորդորական տետրակը կարդան , որ աս հետեւեալ որոշումները ընեն ճշմարիտ Վատուծոյ առջին՝ Ընոր օգնութեանը ապաւինելով :

Որոշեցի , 1 . Քանի որ Վատուած կարողութիւն տայ ինձի , իմ կենացս կանոնն ու օրէնքը պիտի ընեմ՝ ամէն Տէրունական օր ներկայ գտնուիլ Վատուածային հրապարակական պաշտօններուն :

2 . Ո՞ինչ որ իրաւացի պատճառ մը չունենամ՝ որով կարող ըլլամ արդարացընել ինքզինքս Վատուծոյ արդարութեան ատեանին մէջ , անձանձիր և անդանդաղ ներկայ գրտնուիմ և' առաւօտեան և' երեկոյեան պաշտօններուն :

3 . Որ ջանք ընեմ , որ Ճիշդ սահմանեալ ժամանակներուն Վատուծոյ Տանը մէջ գտնուիմ :

4. Որ կարողութեանս չափ յորդորեմ իմ  
բոլոր ընտանիքս , որ կանոնաւորապէս Վատու-  
ծոյ Տունը երթան :

5. Որ ջանք ընեմ վայելուչ եղանակով հա-  
մոզել եկեղեցւոյն միւս անդամները , և առ  
հասարակ բոլոր ժողովուրդը , որ ամենայնիւ  
պատրաստ գտնուին աս երեելի պարտաւորու-  
թիւնը կատարելու յօժարակամ և ուրախա-  
միտ ծառայութեամբ :



2013

4997 3003  
2013

